


5059

839.82

F-74



84-2

F-62

XII ՅԱԻԵԼԻԱԾ «ՅՈՒՇԱՐԱՐ»-Ի XII

ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐ

ԿԵՏԵՐԳՈՒԹԻՒՆ 2 ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄ

Հեղինակ՝ Բիերնասերն, Բիերնսոն

Թարգմանիչ՝ Յովհ. Տէր-Մարտիրոսեան

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆԲ

ԵԱՆՍԷՆ

ՏԻԿԻՆ ԵԱՆՍԷՆ, նրա կինը

ԼԱՌԻՐԱ նրանց ազջիկը

ԱԿՍԷԼ, նրա ամուսինը

ՄԱՏԻՂԵԱ Լատրայի ընկերուհին

ԵԱՌԱՅ

նորաստեղծներ

№ 3



Թ ի Ք Ղ ի ս

1908

5059

833-82 46

Բ-74

ՄԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Ա Ր Ա Ր Ի Ա Շ Ա

03 AUG 2005
02 NOV 2009
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ձեռն գարդարած սենեակ, յատակի վրայ փռած է գորգ, նախաբն-
մի աջ կողմում դրած է մի թաղանթ, ձախում մի երկրորդը, վերջի-
նի առաջ մի փոքրիկ սեղան՝ որի վրա լրագիրներն են դարսած,
մէջ տեղը մի սեղան եւ թաղկաթոններ, ետեւի պատի մէջ դուռ դե-
պի նախասենեակը

1212

1) ԵԱՆՍԷՆ, յանտիրճան Բաղճոյի վրայ շր-
44ր է կարգում: ԱԿՍԷԼ, շահիրճան Բաղճոյին,
յեւրին Բանած ունի շրագիր, Բայց չի կարգում:
ՏԻԿԻՆ ԵԱՆՍԷՆ, Բեջմեղի սեղանի ճոյ նստած
Հար է նստած: ԼԱՌԻՐԱ, յետոյ ՄԱՏԻԼԴՍ ԵՒ
ԾԱՌԱՅ:

ԼԱՌԻՐԱ.—Ներսէս է ճոյնում: Բարի լոյս
մալրիկ: Համբարում է ճորջ:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Բարև նազելիս, լա-
քնեցիք:

ԼԱՌԻՐԱ.—Հիանալի: Բարև՛ հայ-
րիկ: Համբարում է կորջ:

ԵԱՆՍԷՆ.—Բարև սիրելիս, բարև՛,
համբարում է նրան. ինչպէս է առողջու-
թիւնդ լու ես:

ԼԱՌԻՐԱ.—Շատ լաւ: Աճառնում ճոյնից
անցնելու: Բարև Ակսէլ: Նստում է սեղանի
ճոյ, ճոյ քիմայլ:

ԱԿՍԷԼ.—Բարև՛:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Շատ ցաւում եմ, հո-
գիս, որ այսօր ես չեմ կարող գալ այդ
պարահանդէսին: Հեռու է, խիստ դուրսը
ցուրտ:

ԵԱՆՍԷՆ.—Աչքիւ շրագիր չի: Եւրո-
շոյ: Մալրդ հիւանդ է. նա հազաց գի-
ւերս:

ԼԱՌԻՐԱ.—Հազաց:

ԵԱՆՍ.—Երկու անգամ: ո. Եանսէնը
Հաղում է. Եանսէնը աչքիւ շրագիր է յառում:
Տեսնում ես, ինչ էլ որ լինի մալրիկդ
տանից դուրս չպէտք է գալ:

ԼԱՌԻՐԱ.—Եթէ այդպէս է, ես էլ
չեմ գնալ:

ԵԱՆՍԷՆ.—Եւ ամենից լաւն էլ
այդ է. եղանակը այնպէս խոնաւ... Կեռն-
Շալդ ինչո՞ւ վրադ չես առել, հոգիս,
ո՞ւր է շալդ:

ԼԱՌԻՐԱ.—Ակսէլ, մօրս շալը բեր,
նախասենեակումն է: Աչքիւ շրագիր է:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Մինչև գարնան գա-
լը դեռ շատ կայ. զարմանում եմ, ինչո՞ւ
այստեղ վառարան չեն վառել:

ԼԱՌԻՐԱ.—Աճառնում, որ վերադառնում
եւ շալը չէր: Եւ որին Եանսէնի վրայ: Ակ-
սէլ, զանգահարիր գան վառարանը վա-
ռեն: Աչքիւ շրագիրում է եւ ներս ճոյնը ճո-
ային սոյնի է կրծանը:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Բայց եթէ ոչ ոք
չպէտք է գնալ այդ պարահանդէսին,
պէտք է նոցա իմաց տալ. դու չես անիլ
այդ, Ակսէլ:

ԱԿՍԷԼ.—Կարող եմ. բայց կարե-
լի է արդեօք չգնալ այդ պարահանդէ-
սին:

ԼԱՌԻՐԱ.—Միթէ չլսեցիր, մայրիկը հազում է:

ԱԿՍԵԼ.—Լսեցի: Բայց... եթէ մեր բարեկամը, մեր ծանօթը մեզ պատուելու համար խնձորք է սարքում... ամբողջ հանդէսը մեզ համար է... և լանկարծ մենք չենք գնում:

ԼԱՌԻՐԱ.—Դէ քնչ բաւականութիւն է առանց մայրիկի գնալը:

ԱԿՍԵԼ.—Կան դէպքեր, երբ բաւականութեան մասին չեն հարցնում:

ԼԱՌԻՐԱ.—Այո, եթէ հարցը պարտականութեան մասին է, իսկ մեր առաջին պարտքը մայրիկի մասին հող տանիլն է, խօս չի կարելի միայնակ թողնել հիւանդ մայրիկին:

ԵԱՆՍԵՆ.—Աչքերը լրագրելու չէնք... Նա դիչերս երկու անգամ հազաց: Ահա նոր էլ...

Տ. ԵԱՆՍԵՆ.—Ակսէլը կարծում է թէ դա դատարկ բան է:

ԵԱՆՍԵՆ.—Ինչպէս է առաջ: Հազը կարող է ծանր հետեանքներ ունենալ... Ինչ է հողում: Կուրծքը... թոքերը... Դարձեւ հողում է: Կարծեմ ես էլ բոլորովին առողջ չեմ:

ԼԱՌԻՐԱ.—Դու խիտ թեթև ես հազնում, հայրիկ:

Տ. ԵԱՆՍԵՆ.—Հայրիկը այնպէս է հազնում, որ կարծես դուրսը ամառն է, այն ինչ ամառաւոյ նշույն անգամ դեռ չի երևում:

ԵԱՆՍԵՆ.—Ահա իսկոյն կը բորբոքուի... Հողում է: Այո, ոչ բոլորովին:

ԼԱՌԻՐԱ.—Ակսէլ, Ակսէլը ծաղկում է: Մինչև նախաճաշիկը պատրաստելը դու մեզ համար լրագիր կարդա:

ԱԿՍԵԼ.—Ուրախութեամբ, բայց նախ և առաջ կուզէի իմանալ թէ հաստատ մենք չպիտի գնանք պարահանդէսին:

ԼԱՌԻՐԱ.—Դու կարող ես գնալ և մեր կողմից ներողութիւն խնդրել:

ԵԱՆՍԵՆ.—Ո՛չ, այդ չեղաւ: Յիշիր, որ դուք հիմա մարդ ու կին էք:

ԱԿՍԵԼ.—Հէնց այդ պատճառով էլ ինձ թուում է թէ՛ Լաուրայի չգալը չի լինիլ: Նա հիմա իմ կինն է: Խնձորքը մեզ համար է սարքում, մենք բոլորովին առողջ ենք... Մէկ էլ որ պարահանդէսները առհասարակ սարքում են ջահելների համար...

Տ. ԵԱՆՍԵՆ.—Եւ ոչ ծերերի:

ԼԱՌԻՐԱ.—Merci, մայրիկը տանից դուրս գալու օրից, դարձեալ պարում է... և պարահանդէսներում միշտ նա է սկսում պարը:

Տ. ԵԱՆՍԵՆ.—Ակսէլը կարծում է թէ, աւելի լաւ կլինի, եթէ ես այդ չանեմ:

ԵԱՆՍԵՆ.—Աչքերը լրագրելու չէնք... Մայրիկը հիանալի պարում է:

ԱԿՍԵԼ.—Ես էլ գիտեմ այդ, և շատ անգամ պատիւ եմ ունեցել նրա հետ միասին պար սկսելու: Բայց մտածեցէք, այնտեղ կը հաւաքեն 50-ի չափ հիւրեր, ինչքան զխացաւանք, ինչքան ծախս է եղած, և այդ բոլորը մեզ համար: Նրանց այդպէս լուսախաբելը ուղղակի մեղք է:

ԵԱՆՍԵՆ.— Ինչպէս առաջ: Մենք ինքներս կարող ենք նրանց համար պարահանդէս սարքել:

Տ. ԵԱՆՍԵՆ.—Մանաւանդ որ, մէկը դեռ մեզ վրայ է միացել:

ԼԱՌԻՐԱ.—Դա ամենից լաւ կլինի, մեր տեղը աւելի լայն, սրտաբայ է: Ընդհանուր լուսաբան:

ԱԿՍԵԼ.—Մտնում է կնոջը և լսում: Նրա լուսաբան: Եւ քո նոր զգեստը, իմ առաջին ընծան... Միթէ նա էլ չի հրապուրիլ, կապուտ շղարչ՝ արծաթէ ատտ-

ղերով: Միթէ նրանց վիճակած չէ չիալել այս երեկոյ:

ԼԱՌԻՐԱ.—Ո՛չ, ասողերը չեն կարող փալել այն երեկոյ՝ երբ մայրիկը բացակայ է:

ԱԿՍԵԼ.—Լաւ, ես կգրեմ որ մենք հրաժարում ենք: Գո՛ւր չէ:

ԵԱՆՍԵՆ.—Ինչպէս է առաջ, Աւելի լաւ կլինէր գուցէ, եթէ ես մի երկու խօսք գրէի: Այնպէս կանգնում է:

Տ. ԵԱՆՍԵՆ.—Ի հարկէ:

2) ՆՐԱՆԻ, ՄԱՏԻԼԴԱ ԵՒ ԾԱՌԱՅ

Ներք է ճորտած Մարիլլան, յետոյ ճորտած՝ որ Բայ է անուս դասն էրիս թեւեւ:

ՄԱՏԻԼԴԱ.—Նախաճաշիկը պատրաստ է:

ԵԱՆՍԵՆ.—Վեր է կենում և Բորտած: Գնալ յետոյ: Նալը վայր մի առնիլ, հոգեակս, նախասեղանիկում ցուրտ է: Գո՛ւր չէ:

ԱԿՍԵԼ.—Թեւ զարմ է Լաուրային և նրա հետ մի քանի քայլ առաջ գնում: Քեզ հետ խօսել եմ ուզում, կարելի է:

ԼԱՌԻՐԱ.—Բայց պէտք է նախաճաշիկ:

ԱԿՍԵԼ.—Մարիլլային, որը կանգնած է նրանց ետեւ: Համեցէք... Մարիլլան գնում է: Նրա ետեւից գնում է և ճորտած:

3) ԱԿՍԵԼ ԵՒ ԼԱՌԻՐԱ

ԱԿՍԵԼ.—Միթէ քեզ չի կարելի համոզել որ գնանք պարահանդէս:

ԼԱՌԻՐԱ.—Կարծածիս պէս էլ եղաւ, դրա մասին պիտի խօսէիր:

ԱԿՍԵԼ.—Գոնէ ինձ համար:

ԼԱՌԻՐԱ.—Բայց դու ինքդ տեսար, որ հայրիկը և մայրիկը չեն ուզում:

ԱԿՍԵԼ.—Ես ուզում եմ:

ԼԱՌԻՐԱ.—Բայց եթէ նոքա չեն ուզում:

ԱԿՍԵԼ.—Ուրեմն դու առաջ նրանց աղջիկն ես և ապա միայն իմ կիներ:

ԼԱՌԻՐԱ.—Ի հարկէ:

ԱԿՍԵԼ.—Ո՛չ, երկու օր առաջ դու խոստացար հօրդ և մօրդ թողնել և ինձ հետեւել:

ԼԱՌԻՐԱ.—Մի՞թէ Գարահանդէս: ոչ, այդպիսի բան ես չեմ խօստացել:

ԱԿՍԵԼ.—Ամենայն տեղ, ուր որ ցանկանամ:

ԼԱՌԻՐԱ.—Բայց, սիրելիս, այդպէս բան դու չես ցանկանալ, որովհետեւ չի կարելի...

ԱԿՍԵԼ.—Ո՛չ, կարելի է՝ եթէ ուզենաս:

ԼԱՌԻՐԱ.—Բայց ես ամենին չեմ ուզում:

ԱԿՍԵԼ.—Նոյն օրը դու լսեցիր որ այլը կնոջ գլխաւորն է... և դու պէտք է բաժանելիս քո ծնողներից, եթէ ես ուզենամ: Եթէ ոչ, ինչո՞ւ համար էիր յօժարում իմ կինս լինել:

ԼԱՌԻՐԱ.—Հէնց նրա համար, որ միշտ մնաս այստեղ, հայրիկիս և մայրիկիս մօտ:

ԱԿՍԵԼ.—Ի՞նչ ես ասում, ուրեմն ինձ հետ միասին ապրել չես ուզում:

ԼԱՌԻՐԱ.—Ուզում եմ, բայց միևնոյն ժամանակ չեմ ուզում նրանցից բաժանել:

ԱԿՍԵԼ.—Երբէք:

ԼԱՌԻՐԱ.—Երբէք, եթէ միայն հարկը չստիպէ:

ԱԿՍԵԼ.—Եւ երբ:

ԼԱՌԻՐԱ.—Ե՛րբ, երբ նրանք աշխարհիս երեսին այլևս չլինեն. բայց ինչո՞ւ մտածել այդ մասին:

ԱԿՍԵԼ.—Մի լար, նազելիս, լսիր,

արդեօք չես կարող ինձ հետ գնալ, նախ քան նրանց մեզ թողնելը: ԼԱՌԻՐԱ.—Ո՛չ, դա անկարելի բան է...

ԱԿՍԵԼ.—Ա՛խ, Լաուրան, դու ինձ չես սիրում:

ԼԱՌԻՐԱ.—Այդ ինչ ես խօսում, դու ինձ նեղացնել ես ուզում:

ԱԿՍԵԼ.—Դու մինչև անգամ չգիտես թե՛ ինչ է նշանակում սիրելը:

ԼԱՌԻՐԱ.—Չգիտեմ. ամօթ է քեզ համար, Ակսել:

ԱԿՍԵԼ.—Լաու, ուրեմն, ասա՛ ինձ, բացատրիր:

ԼԱՌԻՐԱ.—Համբարձեմ է նրան. Այլևս հարկաւոր չէ զրա մասին խօսել, չէ որ դու գիտես, ես լաց կլինեմ, աչքերս կը կարմրին... մալրիկն ու հալրիկը կը հարցնեն թէ ինչիցն է, իսկ ես անկարող կլինեմ ասել... և վատ բան դուրս կգա:

ԱԿՍԵԼ.—Լաու է մի քիչ լաց լինել հիմա, քանթէ լետոյ շատ:

ԼԱՌԻՐԱ.—Բայց ինչու, ես ինչ եմ արել:

ԱԿՍԵԼ.—Դու ինձ քո ձեռքն ես տուել և ո՛չ սիրտդ, և քո համաձայնութիւնը, իսկ կամքը՝ ո՛չ, լանձնել ես քեզ ինձ, բայց առանց գիտակցութեան, թէ ինչպէս և ինչու: Դու պէտք է զարդարելի իմ կեանքը, դառնալիք իմ սիրտը, իմ երջանկութիւնը, բայց զրա փոխարէն ինձ այսքան տանջանք ես պատճառում:

ԼԱՌԻՐԱ.—Աստուած իմ, և ես եմ մեղաւորը...

ԱԿՍԵԼ.—Ո՛չ, մեղաւորը ես եմ, ես խաբեցի ինձ զանազան լոյսերով... Ես կարծում էի թէ՛ ինձ կը լաջողի զարթեցնել քո սրտում սիրոյ զգացմունքը, բայց մինչև հիմա չկարողա-

ցալ ինքս՝ քեզ հասկացնել տալ անգամ, իմ թափած ճիղը իզուր անցաւ... մի բան է մտնում, վճռել և... վերջին փորձն անել:

ԼԱՌԻՐԱ.—Ի՞նչ, վերջին:

ԱԿՍԵԼ.—Ա՛խ, Լաուրա, ես քեզ այնքան սիրում եմ:

ԼԱՌԻՐԱ.—Եթէ այսպէս լինէր, դու ինձ չէիր նեղացնել. ես խօ երբէք, քեզ չեմ նեղացնում:

ԱԿՍԵԼ.—Ուրեմն, կատարիր իմ այս միակ խնդիրքս և ես այն ժամանակ ապագայում աւելի շատ բան կը յուսամ. գնանք պարահանդէս:

ԼԱՌԻՐԱ.—Բայց չեմ կարող...

ԱԿՍԵԼ.—Լաու, ուրեմն ես տեսնում եմ որ այլևս յետաձգել չի կարելի:

ԼԱՌԻՐԱ.—Դու ինձ վախեցնում ես, այնպէս խիստ ես նալում:

ԱԿՍԵԼ.—Ո՛չ, ո՛չ, սա՛ անտանելի է, ես չեմ դիմանալ:

ԼԱՌԻՐԱ.—Միթէ ես այդ աստիճան վատ եմ: Այդպիսի բան ինձ դեռ ոչ ոք չի ասել:

ԱԿՍԵԼ.—Մի լար, իմ հրեշտակս, քո բոլոր մեղքը նրանումն է միայն, որ այդպէս նազելի ես՝ թէ լալիս, թէ ծիծաղելիս. դու իմ միակ ուրախութիւնն ես, քո ուրախ ծիծաղը ցրում է իմ սիրտը մտքերը, բայց դու պէտք է ապրիս ինձ հետ և ինձ համար Լաուրան լալի՛ ե. Հանդարտուիր, ապա թէ ոչ աչքերդ կը կարմրին, ասա՛, մալրիկը գալիս է, Ո՛չ դա Մատիլդան է:

4) ՆՐԱՆՔ ԵՒ ՄԱՏԻԼԴԱ

ՄԱՏ.—Սուրճը կտառուչի:

ԱԿՍԵԼ.—Իսկոյն կգանք, այսինքն միայն Լաուրան... ես ձեզ հետ կը ցանկանայի խօսել:

ՄԱՏ.—Ինձ հետ: ԱԿՍԵԼ.—Եթէ կը բարեհաճէք: ՄԱՏ.—Ինչո՞ւ չէ: ԼԱՌԻՐԱ.—Բայց դու կգաս մեզ մօտ, այնպէս չէ:

ԱԿՍԵԼ.—Այո, այո, հոգիս:

ԼԱՌԻՐԱ.—Գնա՛՛ք է նրա հետ Այդպէս բան երբէք չէ եղել և չի էլ կարող լինել:

ԼԱՌԻՐԱ.—Փառք Աստուծոյ: Այնպէս է:

5) ԱԿՍԵԼ ԵՒ ՄԱՏԻԼԴԱ

ՄԱՏ.—Ի՞նչ էք ցանկանում:

ԱԿՍԵԼ.—Դուք գիտէք լուռ մնալ:

ՄԱՏ.—Ո՛չ:

ԱԿՍԵԼ.—Այսինքն չէք ուզում:

ՄԱՏ.—Այո:

ԱԿՍԵԼ.—Դուք չէք ուզում այլևս իմ ընկերակցին լինել: Բարձր է նրա ճշտութեամբ առաջ...

ՄԱՏ.—Ձեռքդ չեմ ե՛րբ հարցնում և ո՛ր բան չեմ գնում: Այո, առաջ:

ԱԿՍԵԼ.—Իսկ հիմա ինչու ո՛չ: Մտնում է նրան. Այդպիսի փոփոխութեան պատճառն ինչ է:

ՄԱՏ.—Դուք էք, դուք հիմա պատկաճ էք, ամուսնացած:

ԱԿՍԵԼ.—Ո՛չ, բանն էլ հէնց այդ է որ ո՛չ, այդ այդպէս չէ:

ՄԱՏ.—Ի՞նչպէս:

ԱԿՍԵԼ.—Դուք ձեր սուր դիտողութեամբ այդ արդէն նկատեցիք:

ՄԱՏ.—Ես կարծում էի թէ՛ դուք ինքներդ էք այդպէս սարքել...

ԱԿՍԵԼ.—Անչու դուք ինձ այդպէս կամաց էք պատասխանում, միթէ ես մի որևիցէ բանով մեղաւոր եմ ձեր առաջ:

ՄԱՏ.—Այդ որտեղից ձեր միտքն ընկաւ, այդ ինչ հարց է:

ԱԿՍԵԼ.—Քանի ժամանակից ի վեր դուք խուսափում էք ինձանից, բայց լինում էք ինչքան բարի էիք առաջ իմ վերաբերմամբ, չէ որ ամեն բանի համար ես պէտք է ձեզ շնորհակալ լինեմ. ձեր շնորհիւ նա իմը եղաւ, ներքան տեսնելու համար ես աշխատում էի պատահել ձեզ. ես ձեզ էի տալիս իմ թեւ, որ կարելի լինի միւսը նրան պարզել, ձեզ հետ էի խօսում՝ նրան լսել տալու համար: Լաուրան կարծում էր թէ, նա ձեզ համար ծառայութիւն է ՄԱՏ.—...Այն ինչ ես նրա համար...

ԱԿՍԵԼ.—Առանց դուք այդ գիտեանալու, այ թէ ինչն է զւարճալին:

ՄԱՏ.—Այո, շատ զւարճալի:

ԱԿՍԵԼ.—Յետոյ սկսեցին խօսել, թէ ես և դուք ծածուկ կերպով պսակկուել ենք, և Լաուրան միայն վարագործի դեր է կատարում. հէնց այդ էր որ ինձ ստիպեց շտապել գործին վախճան պալ:

ՄԱՏ.—Այո, դա շատերի համար անսպասելի բան էր:

ԱԿՍԵԼ.—Ես կարծում եմ նոյն իսկ ձեզ համար՝ իսկ Լաուրայի և ծերունիների համար՝ ասելն էլ աւելորդ է... բայց... ամենից վատն այն է, որ դա անսպասելի մի բան դուրս եկաւ, և իմ անձնական երջանկութեան ներկատմամբ:

ՄԱՏ.—Ի՞նչ:

ԱԿՍԵԼ.—Ես գիտէի, որ Լաուրան դեռ ևս մանուկ է, բայց կարծում էի, թէ նա կին կդառնայ՝ երբ կիմանայ թէ՛ ինչ է սէրը. բայց նա մինչև հիմա այդ չգիտէ: Ծաղկիկը չի բացում, օղին տաքութիւնն է պակասում: Տե՛ք մեզ այդ տաքութիւնը, դուք ձանաչում էք

լաուրային, դուք նրա հետ էիք ապրում այն ժամանակահանից սկսած՝ երբ նրա մէջ զարթնել է առաջին զգացմունքը, առաջին իղձը... և ձեր մէջ այնքան սէր կայ, այնքան անձնուրացութիւն. կեանքի մի ամենածանր վայրկեանը նրա վրա հասաւ մի այնպիսի ժամանակ, երբ բոլորովին պատրաստած չէր դրա համար, հէնց այդ պատճառով էլ նրան զեկավարելու գործը դուք պէտք է ձեր վրա առնէք, նրան ներշնչէք սէրով և ձեր ձեռքերից դէպի իմ ձեռքը լանձնէք:

ՄԱՏ.—Ե՞ս: Լուսին:

ԱԿՍԷԼ.—Դուք չէք ուզում:

ՄԱՏ.—Ո՛չ...

ԱԿՍԷԼ.—Ինչո՞ւ, չէ՞ որ դուք սիրում էք նրան:

ՄԱՏ.—Ուզիդ է, բայց...

ԱԿՍԷԼ.—Դուք ամեն բան կարող էք զլուխ բերել, դուք հոգով մեզանից աւելի հարուստ էք, և աւելի շուտ կը գտնէք նրա սրտի ճանապարհը:

ՄԱՏ.—Ես վաղուց գիտեմ, որ դուք կարող էք շողոքորթել:

ԱԿՍԷԼ.—Շողոքորթել: Ե՞ս. հէնց այս խնդիրքս ամեն բանից լաւ է ցոյց տալիս թէ քննչ անսահման...

ՄԱՏ.—Բաւական է, բաւական է, ես չեմ կարող...

ԱԿՍԷԼ.—Բայց ինչո՞ւ, գոնէ պարզ ասացէ՛ք:

ՄԱՏ.—Ինչո՞ւ, ինչո՞ւ... ոչ... Հեռուս է մի կողմ:

ԱԿՍԷԼ.—Ինչո՞ւ ալդպէս անմատչելի դարձաք:

ՄԱՏ.—Կանգնում է, կանգնում է, պատահանել, բայց յանկարծ շարժով արտաքին է գնում:

6) ԱԿՍԷԼ, ԳԻՆՆԵ

Ի՞նչ է եղել դրան... Թէ լաուրայի հետ կուել են: Ո՛չ, մի ուրիշ բան կլինի, բայց ինչ որ էլ եղած լինի, ես հիմա աւելի ծանր հոգսեր ունեմ, եթէ մէկը չի կարող ինձ հասկանալ, միւսը չի ուզում. իսկ ծերունիները և չեն ուզում և չեն կարող. ես ուրեմն պէտք է գործեմ ինքս և հէնց այս րոպէիս, հէնց հիմա է ժամանակը, քանի դեռ վերջնականապէս այստեղ տուն ու տեղ չենք եղել, որովհետև լստոյ դա կարող է ուրիշներին բոլորովին բաժանելու պէս բան թաւ: Իսկ շարունակել այս տեսակ կեանքը, ես ալլևս անկարող եմ: Երբի անքնական դրութիւնը, համբերելը, միևնոյն է թէ ինքնակամ մարդ թող տալ իրան անդամալոյծ դարձնել: Այդ անսահման շարժանքի, ներողամտութեան բարակ ցանցը կապկպում է իմ ոտներս ու ձեռքերս: Ես ստիպւած եմ նոյն զգուշութեամբ սողալու նրանց կանկարասիքի, ծաղիկների միջով, ինչպէս և նրանց սովորութիւնների: Կարծեմ աւելի լարմար է այստեղ ամբողջ տունը զլուխ վայր դարձնել, քան մի որեիցէ դատարկ բանի հետ փոխել: Ես համարեա չեմ կարող շարժել, այդ անտանելի է, եթէ այս բազմոցը պատին աւելի մօտիկացնենք, կամ այնտեղից վերցնենք այն աթոռը, միթէ դա կնշանակէ բնութեան անոններին ընդդէմ շարժել: Այնպէս որ սկզբից է արդէն որոշուած այս անդանի տեղը: միթէ չի կարելի սրա տեղը փոխել: Սեղանը մի օտեւէ կողմ է դրուած: Դուրս է գալիս որ կարելի է: Այս բազմոցը ինչո՞ւ է այսպէս դուրս ընկել: Բազմոցը պատին աւելի է մօտեցնում: Այս աթոռներն էլ միշտ ոտքի տակ են: Մա

այնտեղ, իսկ նա այստեղ: Աւելի էր դուրս գալիս: Պէտք է վերջապէս տեղ ոտքերի համար: Ճշմարիտ, կարծեմ մանգալս էլ եմ մոռացել, ահա մի տարին լրանում է, որ ես չեմ լսել իմ քաղերի և իմ ձայնը, այստեղ փոփսում են միայն և հազում, կամ գուցէ, ես էլ ձայն չունեմ:

Հեռու պատնէշներ, հեռու կապանքներ, Դուրս պիտի թռչեմ ես իմ խոր բանտից. Հեռու...

7) ԱԿՍԷԼ, ԵԱՆՍԷՆ, Տ. ԵԱՆՍԷՆ, ԼԱՌԻՐԱ ԵՒ ՄԱՏԻԼԻՍ

Լուսին:

ԼԱՌԻՐԱ.—Ակսէլ. այդ քեզ քննչ պատահեց:

ՄԱՏ.—Դուք միայնակ:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Այս քննչ է, պարահանդէս ունիս:

ԵԱՆՍԷՆ.—Եւ պարում ես քնքրեքա՞ծ զերը կատարելով:

ԱԿՍԷԼ.—Ես զարձանում եմ:

ԵԱՆՍԷՆ.—Մեր կարասիքի հետ:

ԱԿՍԷԼ.—Ես ուզում եմ միայն տեսնել, թէ նրանք լատակին չեն կըպցրած:

ԼԱՌԻՐԱ.—Բայց ինչո՞ւ այդպէս բղաւում ես:

ԱԿՍԷԼ.—Ուզում եմ իմանալ թէ արդեօք դեռ ևս ձայն ունիմ:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Այստեղ մօտիկ անտառ կայ, այնտեղ կարող ես անել այդ վարժութիւնները:

ԵԱՆՍԷՆ.—Ձրվէ՛ք էլ կայ, եթէ ուզում ես մի երկրորդ Գեմոսթենէս դառնալ:

ԼԱՌԻՐԱ.—Եւ ի՞նչ է, Ակսէլ:

ԱԿՍԷԼ.—Դեռ ևս ոչ, բայց գուցէ շուտով թոցնեմ:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Միթէ քեզ մի վատ բան է պատահել:

ԱԿՍԷԼ.—Շատ վատ: ԵԱՆՍԷՆ.—Ի՞նչ է, մի գուցէ վատ լուր ես ստացել:

ԱԿՍԷԼ.—Բոլորովին ոչ, ես անբաղդ եմ:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Հարսանիքից երկու օր լստոյ:

ԵԱՆՍԷՆ.—Բայց քննչ տարօրինակ կերպով ես արտայայտում այդ անբաղտութիւնդ:

ԱԿՍԷԼ.—Ուրիշ քննչ անեմ:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Բայց քննչ է պատահել քեզ: Ես ինքս եմ նկատել որ դու մեր լուսացածի պէս երջանիկ չես... դէ, ուրեմն բացատրիր մեզ դրա պատճառները, մենք հիմա քո ծնողներին տեղն ենք:

ԱԿՍԷԼ.—Վաղուց ուզում էի այդ բայց սիրտ չէի անում:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Ինչո՞ւ, միթէ մենք վատ ենք վերաբերում դէպի քեզ:

ԱԿՍԷԼ.—Չափից դուրս լաւ:

ԵԱՆՍԷՆ.—Բայց այդ քննչ է նշանակում:

ԱԿՍԷԼ.—Այն թէ ես այստեղ չափից դուրս լաւ դրութեան մէջ չեմ, այնպէս որ այդ բանը խանգարում է իմ ուժերի զարգանալուն. չի լազեցնում գործունէութեան ծարաւս. դրանից վիրաւորում է իմ ինքնասիրութիւնը:

ԵԱՆՍԷՆ.—Ա՛յ թէ ինչ, և ուղածդ քննչ է:

ԱԿՍԷԼ.—Ես ուզում եմ ինչ որ անխառն, ուզում եմ միայն ինձ պարտա-

կան լինել, ուզում եմ վերջապես մի բան դառնալ:

ԵԱՆՍԷՆ.—Յնորքներ են, ցնորքներ... Գնահ է բռնի գործը:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Ո՛չ, այդ այդպէս չի կարելի թողնել: չէ որ նա մեր աղջկայ ամուսինն է. ինչ ես ուզում ուրեմն դառնալ, սիրելիս: Երեսփոխան:

ԱԿՍԷԼ.—Ո՛չ, ես մի նոտար քեռի ունեմ, նա քաղաքում գործակալական գրասենեակ ունի. մեծ գործեր... և նա արդէն վաղուց ինձ հրաւիրել է իրան ընկեր դառնալու:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Բայց դա անյարմար բան է:

ԵԱՆՍԷՆ.—Գնորքներ, ցնորքներ, աւելի լաւ է զնանք նախաճաշելու. Ուրում է քննել:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Ա՛յնչէն. Գու խօս չես կարող այստեղից նրան ընկերակցել:

ԱԿՍԷԼ.—Ի հարկէ, բայց ես կարող եմ քաղաք տեղափոխել:

ԲՈՒՆՈՐԸ.—Քաղաք... Լաւ է, Երեսփոխան:

ԵԱՆՍԷՆ.—Բայց դա արդէն վերին աստիճանի դատարկ խօսք է:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Ո՛չ, կարծես թէ այստեղ մի ուրիշ բան կայ, գուցէ առանձին պատճառներ ունիս. պարտքեր, կամ մի այլ բան...

ԱԿՍԷԼ.—Շնորհակալ եմ, սիրելիներս, պատքերս արդէն տւել էք:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Ուրեմն ուրիշ ինչ կայ. վերջին ժամանակներս դու սովորականի պէս չես շարժուում, ասան, ինչ է պատահել. դրա պատճառը ինչ է:

ԵԱՆՍԷՆ.—Յնորքներ են, իսկ պատճառը անմարտողութիւնը: Միտդ է, ինձ էլ նոյնը պատահեց վերջին օրերս, երբ չափից դուրս խեղդեալին էի կե-

րել: Ա՛յնչէն. Գնանք մի բաժակ խերես խմենք և ամեն բան կանցնի:

ԱԿՍԷԼ.—Ո՛չ, չի անցնի, նորից կկրկնւի և աւելի վատ բան դուրս կը գայ, իմ ուղեղը աշխատանք է պահանջում, ինձ կեանքի նպատակ է պէտք, ես տխուր եմ...

Տ. ԵԱՆՍԷՆ.—Հարսանիքից երկու օր չետո՞ր:

ԵԱՆՍԷՆ.—Եթէ այդպէս է սկսիր աշխատել, ձեռքդ բռնողն ո՞վ է: Ի՞նչ ես ուզում, կառավարել կալածքներ, մի որեւիցէ առևտրական գործի ձեռնարկել, վճարի, ես շատ ուրախ եմ, որ դու այդպիսի նպատակներ ունես. փող էլ կտամ, միայն խաղեր մի սկսիր:

ԱԿՍԷԼ.—Բայց այդ դէպքում ես դարձեալ ձեզ պարտական պիտի լինեմ:

ԵԱՆՍԷՆ.—Քեզ համար, ի հարկէ, աւելի լաւ է քեռուդ պարտական լինելը:

ԱԿՍԷԼ.—Նա ինձ ոչինչ չի տալիս, ես պէտք է զնեմ միայն իմ մասը:

ԵԱՆՍԷՆ.—Լաւ, բայց ձրտեղից պիտի ճարես այդ գումարը:

ԱԿՍԷԼ.—Յոյս եմ դնում մասամբ իմ աշխատանքիս վրայ... բացի դրանից, յոյս ունեմ որ ինձ մի քիչ պարտք կտաք:

ԵԱՆՍԷՆ.—Ո՛չ մը կոպէկ:

ԱԿՍԷԼ.—Բայց ինչո՞ւ
ԵԱՆՍԷՆ.—Նրա համար, որ իմ փեսան, իմ փեսան է, և ոչ թէ մի որեւիցէ գործակատար:

ԱԿՍԷԼ.—Միթէ դա մի անպատկար արարածներն է:

ԵԱՆՍԷՆ.—Ո՛չ, բայց դու կապած ես թագաւորութեան ամենահարուստ և ամենահին ընտանիքներից մէկի հետ՝ որի սովորութիւնները դու պարտական ես չարգել: Հին ժամանակներից ի վեր

մեր ցեղից դուրս են եկել միայն կալածատէրեր, և ոչ բաղդախնդիրներ, թափառականներ կամ գործակատարներ: Ես երբէք, ոչ մի պարագմունքի հետամուտ չեմ եղել. այլ ինձ են պրտաւել, ինձ են առաջարկել զանազան պատուաբեր պաշտօններ. քեզ նոյնպէս չի վախելում վաճառել քո վկայագիրն ու տաղանդը. հանգիստ նստելով քեզ համար այստեղ՝ քեզ աւելի շուտ կառաջարկեն, քան թէ ինքդ ես սպասում. լսեցիր:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Իմ աղաւնեակս, մի տաքանալ, չէ որ կհիւանդանաս, դու մի կողմ քաշւիր, մենք կամայ-կամաց ամեն բան կարգի կբերենք:

ԱԿՍԷԼ.—Յուզմունքը վնաս է նըրան, ուրեմն մի քիչ աւելի խելացի եղիր, Լաուրա, հայրիկիդ մի բաժակ ջուր բեր, զնանք, սիրելիս սեղանատուն:

ԵԱՆՍԷՆ.—Շնորհակալ եմ, ախորժակս կորուս:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Տեսնո՞ւմ ես, Ակսէլ, Ակսէլ:

ԼԱՌԻՐԱ.—Աժօթ քեզ: Ակսէլ:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Նստիր, սիրելիս, նստիր: Ասուած իմ, այս ինչ է, դու տաքութիւն ունես:

ԵԱՆՍԷՆ.—Այո, այստեղ չոք է:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Իս վառարանիցն է Մատիլդան, ծածկեցէք, մարեցէք, մի բան արէք վերջապէս:

ԼԱՌԻՐԱ.—Շատ լաւն ես, խօսք չկայ:

ԵԱՆՍԷՆ.—Իրանց տեղերը դրէք: Իրանց տեղերը դրէք թոռները: Կոստան է. Սեղանն էլ, բաղմոցն էլ: Դէ, հիմա լաւ է:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Այո, ամեն ինչ կարող է պատահել, երբ տան մէջ օտար մարդ կայ:

ԵԱՆՍԷՆ.—Մինչև հիմա ոչ ոք չէր հակառակուում իմ կամքին:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Ո՛չ, ոչ, այդպիսի բան այլևս չի կրկնւի:

ԵԱՆՍԷՆ.—Եւ ո՞վ, ո՞վ է սկսում... իմ փեսան:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Նա կղղջայ, կղղջջայ... լուսանք որ մեր բարութիւնը նա վերջապէս կհասկանայ, ճշմարիտ, վերջի ժամանակներս Ակսէլը կարծես թէ կախարդած է:

ԼԱՌԻՐԱ.—Այնպէս չէ:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Ի՞նչ. գու էլ մի որեւիցէ բան ես նկատել:

ԼԱՌԻՐԱ.—Ո՛չ, ես ոչինչ:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Լաուրա, դու ուզում ես թաղցնել:

ԵԱՆՍԷՆ.—Մեղանից. Բայց ուրեմն Ուրեմն բանը այնտեղ է հասել:

ԼԱՌԻՐԱ.—Հաւատացէ՛ք, մայրիկ, հայրիկ, որ ոչինչ... միայն...

Տ. ԵԱՆՍԷՆ, և ԵԱՆՍԷՆ.—Ի՞նչ... ԼԱՌԻՐԱ.—Ո՛չ, ոչ, ճշմարիտ, ոչինչ չկայ... Ա՛խ, դուք ինձ վախեցնում էք:

Տ. ԵԱՆՍԷՆ, և ԵԱՆՍԷՆ.—Լալիս է: ՄԱՏ.—Մոռոնու. Լալիս է:

ԵԱՆՍԷՆ.—Մեծապատիւ պարոն, ինչո՞ւ է լալիս:

ԼԱՌԻՐԱ.—Մայրիկ, հայրիկ, նա լեցէ՛ք, ես ճշմարիտ չեմ լալիս:

Տ. ԵԱՆՍԷՆ, և ԵԱՆՍԷՆ.—Լալիս է:

ԱԿՍԷԼ.—Այո, և նա դեռ այնքան պէտք է լաց լինի, մինչև որ ամեն բան ուրիշ կերպարանք ստանալ: Լալիս է, Երեսփոխան: Լաւ, ուրեմն երբ այսքանը ասած է, պէտք է ամեն բան ասել մինչև վերջը: Մեր կապակցութիւնը բաղդաւոր չէ, բաղդաւոր լինելու համար նա չունի ամենազլատարը...

S. ԵԱՆՍ.—Տէր Աստուծ, այդ թնչ է խօսում:

ԵԱՆՍ.—Կեռք. Դու հանդիստ կաց, թող ես... Այն էլ: Ի՞նչ ես ուզում ասել

ԱԿՍԷԼ.—Լաուրան ինձ չի սիրում:

ԼԱՌԻՐԱ.—Այո, ինքն այդպէս է ասում:

ԱԿՍԷԼ.—Նա մինչև անգամ չգիտէ, թէ թնչ է նշանակում սիրելը և ձեր տան մէջ այդ երբէք, չի իմանալ:

ԵԱՆՍԷՆ. Տ. ԵԱՆՍ.—Ինչո՞ւ:

ԱԿՈՒԷԼ.—Որովհետև Լաուրան ապրում է միայն ձեզ համար. ես նրա համար մեծ եղբայր եմ, ոչ ասելի, մեծ եղբայր՝ որի պարտականութիւնն է օգնել նրան՝ ձեզ ասելի սիրելու համար:

S. ԵԱՆՍ.—Եւ դա ձեզ դուր չէ գալիս:

ԱԿՍԷԼ.—Ո՛չ, ո՛չ, ես ամբողջ հոգով սիրում եմ ձեզ, և երախտապարտ եմ ձեր առաջ, ես հպարտ եմ, որ ձեր սրգին եմ. բայց ես կարող եմ ձեր որդին լինել՝ միայն նրա միջնորդութեամբ. այն ինչ՝ նա դեռ իմը չէ, ես կարող եմ գնալ-գալ, ինչպէս իմ խելքն է կտրում, այն ինչ՝ նա մնում է այստեղ: Լաուրան ինձ չի պատկանում, իմ ցանկութիւնները նրա համար ամենին նշանակութիւն չունեն: Վերջապէս նրա ոչ մի փափախանքը լիովին ինձ չի պատկանում. նա իր փափախանքը երեք մասի է բաժանում, և այդ երրորդը, վերջին մասն է միայն ինձ հասնում. գուցէ և ոչինչ չի հասնում:

S. ԵԱՆՍԷՆ.—Դու մեզ նախանձում ես:

ԵԱՆՍԷՆ.—Նախանձում է:

ԼԱՌԻՐԱ.—Ա՛յ թէ ինչու մե է եղել բանը:

ԵԱՆՍԷՆ.—Ի՞նչ ծիծաղելի և տա-

րօրինակ միտք է դա, Ակսէլ, թող այդ ոչ ոք չիմանայ:

ԱԿՍԷԼ.—Ո՛չ, դա ո՛չ տարօրինակ է, ոչ ծիծաղելի, բանը հէնց դրա մէջն է, դա չարչարում, տանջում է ինձ, ես տանջում եմ Լաուրային, վիրաւորում եմ ձեզ և ինքս դառնում եմ մի դատարկ և չար խառնակիչ...

ԵԱՆՍԷՆ.—Դա ուղղակի հիւանդութիւն է:

ԱԿՍԷԼ.—Եւ դուք էք նրա պատճառը:

ԵԱՆՍ. և Տ. ԵԱՆՍ.—Մենք:

ԵԱՆՍԷՆ.—Գոնէ մի քիչ...

ԱԿՍԷԼ.—Դուք ինքներդ չէք տեսնում որ ինձ վերաբերում է ոչ ասելի լաւ, քան ձեր իրան ընծայած տիկիները... Դուք ինքներդ դողում էք նրա սիրոյ վրայ, և անբաւական կլինէք. եթէ Լաուրան ինձ ձեզանից ասելի սիրէր...

ԵԱՆՍԷՆ.—Գոնէ, ասելի վախճան կերպով, և ի նկատի ունեցիր այն՝ որ...

ԱԿՍԷԼ.—Ներեցէք, ես միայն այն եմ ուզում ասել. որ երեսան կին չի կարող լինել. թէ ձեզ հետ շարունակէ ապրել՝ Լաուրան ընդմիշտ երեսակը մնալ:

S. ԵԱՆՍԷՆ.—Բայց, Ակսէլ, մենք ինքներս քեզ չէինք ասում, որ նա դեռ ես երեսակ է:

ԵԱՆՍԷՆ.—Մենք քեզ զգուշացնում էինք, մենք խնդրում էինք որ մի երկու տարի էլ պասես:

S. ԵԱՆՍԷՆ.—Չէ, մենք էլ բոլորովին համոզւած չէինք, թէ նա քեզ սիրում է իսկական սիրով:

ԵԱՆՍԷՆ.—Իսկ դու պատասխանեցիր թէ՛ քեզ գրաւում է նրա մանկական անմեղութիւնը...

S. ԵԱՆՍԷՆ.—Որ նրա անմեղութիւնն ու պարզութիւնը քո հոգու վրա մաքրող և գեղեցիկ ներգործութիւն է անում... և այս մենք հասկացանք, որովհետև ինքներս նույն էինք կարծում:

ԵԱՆՍԷՆ.—Այո, մենք հասկացանք քեզ:

S. ԵԱՆՍԷՆ.—Միտք է այն առաւօտը, երբ նա դեռ քնած էր, դու ասում էիր թէ ամբողջ նրա կեանքը նման է մի պայծառ երազի, որին խանգարելը մեղք է:

ԵԱՍԷՆ.—Դու ասում էիր թէ նրա մասին մտածելիս, դու ասելի կամաց ես քալում, կարծես վախենալիս լինես նրա դարթնելուց:

S. ԵԱՆՍԷՆ.—Եւ այն օրւանից, երբ տեսար նրան, դարձեալ սկսեց քո կեանքի գարունը, և քո հոգին լցեց ուրախութեամբ և արիւթեամբ:

ԱԿՍԷԼ.—Այո, այո, այդ բոլորը ուղիղ է, նրա մանուկ, մաքուր ընառնութիւնը այնպէս հանդարտեցնող կերպով ներգործեց իմ վրա, որ կարծես թարմ, հոտաւէտ մալխանան առաւօտուայ հովը անցաւ իմ մօտից:

ԵԱՆՍԷՆ.—Իսկ հիմալ դու դժգոհ ես, որ նա իսկապէս մանուկ է:

ԱԿՍԷԼ.—Այո, այո, երբ ես տեսնում էի սուրբ սեղանի մօտ, ես նրա մէջ իմ իղէալն էի տեսնում. նա նույնն էր ինձ համար՝ ինչ որ Մատոննան՝ հաւատացեալ կաթոլիկի համար. այժմ նա ինձ համար ասելորդ դարձաւ, տարածութիւնը անհետացաւ, և ես միշտ չեմ կարող գմայլել, ինձ հարկաւոր է և սիրել, ես չեմ կարող ծունր խոնարհել, ուզում եմ և սրտիս սեղմել նրան, նրա հայեացքը առաջաւ պէս անմեղ է

և քնքուղ, բայց հիմալ ինձ հարկաւոր է որ նա իմ հայեացքը պտռէ. նրա մասները, նրա ձեռքերը, նրա շրթունքները նույնն են, բայց հիմալ նրա ձեռքերը պէտք է փաթաթելին իմ վզով, շըրթունքները իմ շրթունքներին, իսկ մտքերը միշտ պէտք է իմ մտքերի հետ լինեն, և հսկեն իմ վրա ամեն տեղ: Ես նրան մանուկ առայ, հիմալ նա կին է, բայց առաջաւ պէս քաշում է ինձանից. այն ինչ՝ ես ուզում եմ բոլորովին սիրանալ նրան: Լաուրան չալում է քեզի նա:

S. ԵԱՆՍԷՆ.—Նա մեր աղջկան սիրում է:

ԵԱՆՍԷՆ.—Նա սիրում է ուրեմն, էլ ինչ է պէտք, ամեն բան իր կարգին է, դէ, գնանք մի մի բաժակ խերեալումք, գնանք:

ԱԿՍԷԼ.—Ո՛չ, կարգին չէ, նա պատրաստ է գրկել ինձ լուրւած բուպէին, բայց նրա սիրտը ինձ չի պատկանում. նա չի սիրում այն՝ ինչ որ ես եմ սիրում, չի ուզում այն՝ ինչ որ ես եմ ուզում. այ, այսօրւայ պարահանդէսը վերջնենք. այդ պարահանդէսը նրան ամենին բաւականութիւն չի պատճառել՝ եթէ մալրը չի կարող այնտեղ լինել:

S. ԵԱՆՍ.—Եւ այդքան միայն:

ԼԱՌԻՐԱ.— Այո, մալրիկ, այդ է միայն, պարահանդէսն է մեղաւոր:

ԵԱՆՍԷՆ.—Դէ, գնացէք ձեզ համար պարահանդէս, երկուսդ էլ լիմբոներ էք, գնանք:

ԱԿՍԷԼ.—Ի՞նչ պարահանդէս, պարահանդէս չէ, պէտք չէ ինձ ձեր պարահանդէսը:

ԼԱՌԻՐԱ.—Տեսնո՞ւմ էք ինչպէս մարդ է, նրան տալիս են ինչ որ ուզում

է, և նա արդէն այդ չի ուզում: Ես չեմ հասկանում այդ քննչ է:

ԱԿՍԷԼ.— Ի հարկէ, հարցը այդ դատարկ բաների մասին չէ, այլ գլխաւորի, մեր յարաբերութիւնները: Ես լատուրացի մէջ սէր չեմ նկատում, և ոչ նա կապուած է ինձ հետ, և այդպէս էլ կը լինի՝ քանի նա այստեղ է: Ընդհանուր շարժում:

Տ. ԵԱՆՍ.— Բանի նա այստեղ է:

ԵԱՆՍԷՆ.— Մտնողը Բոյլ յայտնէ: Ի՞նչ էս ուզում ասել:

ԱԿՍԷԼ.— Միայն այն ժամանակ լատուրան կը սովորի նայել ինձ վրա իբրև իր ամուսնի երբ նա կը թողնի անընդհատ իր ծնողների վերա նայելը՞

Տ. ԵԱՆՍ.— Ուղարկուի՞նք ի՞նչ է խօսում...:

ԵՆՍԷՆ.— Նայողն էս բողոքովին լաւ չեմ հասկանում:

ԱԿՍԷԼ.— Եւ դրա համար ես նրան այստեղից պիտի տանեմ:

Տ. ԵԱՆՍ.— Այստեղից տանես:

ԵԱՆՍԷՆ.— Մեր աղջկան...:

ԼԱՌԻՐԱ.— Մօր ճօր վաղէտը Մայրբիկ:

ԱԿՍԷԼ.— Ես մեղք կը գործեմ նրա գէմ, իմ դէմ, և ձեր դէմ, եթէ հիմալ օգուտ չը քաղեմ իմ իրաւունքից: Լատուրան ապրում է այստեղ միայն ձեզ հետ, կեանքը կը կորցնէ նրա համար իր բոլոր հրապուրը, բայց դա անբնական բան է, սուրբ սեղանի առաջ նա այդ չէ խօստացել և ես չեմ ցանկանում այդ: Լատուրան պէտք է ինձ հետևի:

Տ. ԵԱՆՍ.— Մի գայլ անելով ասում է 4այլիս, ինչ Լատուրան ճօրնում է Մայրբոյլին: ԵԱՆՍԷՆ.— Անկարելի է որ դու չըջոթեամք...:

ԱԿՍԷԼ.— Բողոքովին լուրջ, և ես ոչ մի զիջողութիւն չեմ անիլ:

Տ. ԵԱՆՍ.— Տէր ողորմած Աստուած... Լատուրան:

ԵԱՆՍԷՆ.— Ակսէլ, դու գիտես որ մենք հինգ զաւակ ենք ունեցել, բայց չորսը մեռել են... Լատուրան մեր միակ զաւակն է, միակ սիրտիս: Տ. ԵԱՆՍ.— Ակսէլ, մենք չենք զիմանալ կարօտին, նա իր ծնած օրից մեզանից մի օր չէ հեռացել... մեր վիշտն է նրան մեծացրել... մեռածները նրան էլ էին ուզում տանել իրանց հետ, այժմ քննչպէս նրան հեռացնենք...:

ԵԱՆՍԷՆ.— Ակսէլ, դու չար չես, դու չես ցանկանալ մեզ բոլորիս անբաղդացնել: ԱԿՍԷԼ.— Եթէ ես հիմալ զիջանեմ, նոյնպիսի դէպքեր կը կրկնուին ամեն շաբաթ, և ոչ ոք մեզանից այդպիսի բանի չի գիմանալ: Դրա համար միանգամից վերջացնենք: Մի շաբթից լատուրան ինձ հետ պէտք է տեղափոխի քաղաք:

ԵԱՆՍԷՆ.— Ո՛չ, ո՛չ, այդ անկարելի բան է:

Տ. ԵԱՆՍ.— Քո սիրտը չի տանի այդպիսի բան անելու, նայիր նրա վերա և մի անգամ էլ կրկնիր ասածդ: Ակսէլ յեք է Երանոս: Ո՛չ, ես այս գիտէի, դու այդպիսի բան չես կարող անել: Երանոսին: Դէ խօսիր, նեղացիր, բարկացիր վրան:

ԵԱՆՍԷՆ.— Ինչքան մտաբերում եմ, մեր ընտանիքի մէջ դեռ ևս չի լսուած ոչ մի վատ խօսք... Ամբողջապա դէպքը ինձ երազ է թւում... ես աշխատում եմ զարթնել, և չեմ կարող: Լատուրան: Պ. Ակսէլ, երբ մենք տեսցինք ձեզ մեր աղջիկը, մենք ձեզ ոչ մի պայման չը դրեցինք: Մենք ընդունեցինք ձեզ մեր ընտանիքի մէջ, հո-

Տ. ԵԱՆՍ.— Տէր ողորմած Աստուած... Լատուրան:

ԵԱՆՍԷՆ.— Ակսէլ, դու գիտես որ մենք հինգ զաւակ ենք ունեցել, բայց չորսը մեռել են... Լատուրան մեր միակ զաւակն է, միակ սիրտիս: Տ. ԵԱՆՍ.— Ակսէլ, մենք չենք զիմանալ կարօտին, նա իր ծնած օրից մեզանից մի օր չէ հեռացել... մեր վիշտն է նրան մեծացրել... մեռածները նրան էլ էին ուզում տանել իրանց հետ, այժմ քննչպէս նրան հեռացնենք...:

ԵԱՆՍԷՆ.— Ակսէլ, դու չար չես, դու չես ցանկանալ մեզ բոլորիս անբաղդացնել: ԱԿՍԷԼ.— Եթէ ես հիմալ զիջանեմ, նոյնպիսի դէպքեր կը կրկնուին ամեն շաբաթ, և ոչ ոք մեզանից այդպիսի բանի չի գիմանալ: Դրա համար միանգամից վերջացնենք: Մի շաբթից լատուրան ինձ հետ պէտք է տեղափոխի քաղաք:

ԵԱՆՍԷՆ.— Ո՛չ, ո՛չ, այդ անկարելի բան է:

Տ. ԵԱՆՍ.— Քո սիրտը չի տանի այդպիսի բան անելու, նայիր նրա վերա և մի անգամ էլ կրկնիր ասածդ: Ակսէլ յեք է Երանոս: Ո՛չ, ես այս գիտէի, դու այդպիսի բան չես կարող անել: Երանոսին: Դէ խօսիր, նեղացիր, բարկացիր վրան:

գացինք ձեզ համար ապահով դրութիւն ապագայի նշանաւոր լուսերով... և դրա փոխարէն սպասում էինք ձեզանից մի փոքր սէր, մի փոքր երախտագիտութիւն... գոնէ լարգանք: Բայց դուք երախտամոռ ճամբորդի պէս էք վարւում, որ օգուտ քաղելով սիրալիր հիւրասիրութիւնից՝ փախչում է լուսադէմին՝ իր հետ տանելով տան ամենաթանգագին զարդը... Մենք մեր աղջիկը, մեր քնքույ սիրող աղջիկը լանձնեցինք անսիրտ մարդու, մինչև այժմ մենք բաղդաւոր, հարուստ ծնողներ էինք... իսկ հիմալ աղքատ, թալանած որբեր ենք միայն: Նորո՞ւմ է:

ԱԿՍԷԼ.— Ուրեմն ձեր սիրտը կըտորտում է, եթէ գիտնալիք թէ այսպէս կազդի այդ բանը ձեզ վրայ, ես երբէք չէի սկսի... Բայց ասանք կանգնենք կիսաճամբիս... միևնույնն է, մեր մէջ առաջուր համերաշխութիւնը այլ ևս չի լինիլ: Ես զգում եմ այդ. մի անգամ ըսկսել ենք... և բոլորս արդէն տանջոււմ ենք... պէտք է ուրեմն գործը առաջ տանել մինչև վերջը:

ԵԱՆՍԷՆ.— Տեղն է մեզ, խեղճ ու զիւրահաւան անգլտներին:

Տ. ԵԱՆՍ.— Գոնէ մեղ մի ժամանակամիջոց տալիր, որ կարողանանք ընտելանալ այդ մտքին, դա ուղղակի մեզ կը սպանէ:

ԱԿՍԷԼ.— Ո՛չ, դա միայն աւելի կը բորբոքէ վերքը և կը բարկացնէ ձեզ, դուք ինձ կատէք: Ո՛չ, հէնց հիմա պէտք է գլուխ բերել...:

Տ. ԵԱՆՍԷՆ.— Տէր ողորմած Աստուած...:

ԵԱՆՍ.— Ակսէլ, լսիր ինձ... գուցէ դու իրաւունք ունիս... դրա համար էլ ես խնդրում եմ... ես դեռ ոչ ոքի, երբէք չեմ խնդրել... խնդրում եմ խըղ-

ձան, ես արդէն ձեր եմ, չեմ գիմանալ իսկ սա՛ ևս առաւել: Յոյ է սուր ինչ է:

ԱԿՍԷԼ.— Օ՛, ես խտտասիրտ չեմ, բայց ես պէտք է պիտի լինեմ... Եթէ ես հիմալ զիջանեմ, ես կը կորցնեմ լատուրային վերջնականապէս, այդ ես զգում եմ, ուրեմն նա պէտք է հպատակի:

Տ. ԵԱՆՍ.— Արեւի վայելի է: Երբ Ո՛չ, չը պէտք է հպատակի. կեղծակոր, եթէ դու սիրում ես նրան, ինչպէս աշխատում ես ցոյց տալ, դու այստեղ կը մնաս, որտեղ նա է, իսկ նա կը մնալ այստեղ:

ԼԱՌԻՐԱ.— Որ միշտ այժմ կանգնած էր Մայրբոյլին ճօր, վաղու՞մ է ճօր ճօր: Այն մինչև կեանքիս վերջը:

ԵԱՆՍԷՆ.— Բարեբախտ է: Ո՛չ մենք չենք կարող օրէնքը փոխել, ոչ ոք իրաւունք չունի բաժանելու մարդուն և կնոջը: Լատուրան պէտք է գնալ՝ երբ նա կը հրամայէ:

ԼԱՌԻՐԱ.— Հարկիկ, միթէ դու կը կարողանաս...:

ԵԱՆՍԷՆ.— Ո՛չ զաւակս, ես չեմ կարող... բայց ես դարձեալ պատրաստ եմ հպատակուել ճշմարտութեան պահանջին... Ա՛խ, Լատուրան... Գրէ՞մ է նրան, ճայրը մտնում է նրանց:

ՄԱՏ.— Այնչի՛ն: Դուք ճիզելիք էք, անողորմաբար, անզթաբար դուք խտտի պէս կոխտում էք սրտերը. ձեզ ճանապարհ է պէտք, բայց դուք դարձեալ հեշտութեամբ չէք հասնիլ ձեր նպատակին, նա դեռ ևս երեխայ է, բայց ես միշտ նրա մօտ կլինեմ, ես ձեզ չեմ ճանաչում, ձեզ չեմ հաւատում, և սրան միշտ կը պահպանեմ:

ՎԱՐԱԳՈՅՐ

է: Հոգեւորական է նախ: Միակ արարած- ները աշխարհիս երեսին որ ինձ սիրում են: Երբեք բարեւ է Գրեմ:

2) ՄԱՏԻԼԴ և ԱԿՍԵԼ՝ որ հոգեւոր է Գլխաւոր Գրեմից

ԱԿՍԵԼ.—Ես ներս եմ մտնում, նա դուրս է գնում. միշտ այդպէս:

ՄԱՏ.—Այս անգամ պատահմամբ էր: Երբեք է նա վերստին ինչպէս գոռնա- թափել էք:

ԱԿՍԵԼ.—Ես մի փոքր լուզւած եմ... կարդացիք նոր վէպը:

ՄԱՏ.—Գրեմ: Գրեմ: Գրեմ: Ո՞ր վէպը:

ԱԿՍԵԼ.—«Նորաստեղծները» փոք- րիկ գրքակը:

ՄԱՏ.—Ա՛, ես սկսել եմ կարդալ:

ԱԿՍԵԼ.—Լաւուրան էլ է կարդում:

ՄԱՏ.—Նա ասում է թէ դա վատ վէպ է:

ԱԿՍԵԼ.—Ո՛չ, դա տարօրինակ վէպ է... դա ինձ համարեա վախեցրեց, կարծես ես մտայ իմ սեփական սենեա- կը և այնտեղ տեսայ ինձ, նա իմ հոգուն դիպաւ և զարթեցրեց այնտեղ նիրհող մտքերս ու զգացմունքներս:

ՄԱՏ.—Ամեն մի լաւ գիրք այդ- պիտի տպաւորութիւն է գործում:

ԱԿՍԵԼ.—Մեր վերջն էլ այնպէս կը լինի, ինչպէս նրանց... այդ գրքի մէջ... դրա համար ամեն պայման կայ, ես չէի նկատում միայն այդ միջնէ հիմա:

ՄԱՏ.—Ես լսել եմ որ այդպէս են և մատաղ բժիշկները, նրանք իրանց մէջ են գտնում այն բոլոր հիւանդու- թիւնները՝ որոնց մասին կարդում են իրանց գրքերի մէջ:

ԱԿՍԵԼ.—Ա՛, ո՛չ, այստեղ բոլոր-

րովին ուրիշ բան կայ, իմ նախազգաց- մունքները իրանք իրանց հետեւում են ինձ շրջապատող հանգամանքներից այն- պէս, ինչպէս ծուխը կրակից... Այդ գիրքը ինչ շատ բան բացատրեց:

ՄԱՏ.—Իմ կարծիքով այդ գիրքը ուսուցանում է աւելի ներողամտաբար վիրաբերել դէպի կինը, մանաւանդ ե- թէ նա այդպէս դեռահաս է:

ԱԿՍԵԼ.—Ո՛ր, բայց լսեցէք, այն երիտասարդից էլ, որ հասարակ ուսա- նողական կեանքի է սովոր, չի կարելի պահանջել բոլոր փափուկ հարցերի և բարդ լարաբերութիւնների հմտութիւ- նը, որ պահանջում է կնոջ բնաւորու- թիւնից: Մարդը երբէք չի կարող լան- կարծ դառնալ «ամուսնացած»՝ բառի բուն նշանակութեամբ. նա չի կարող դէն ձգել իր սովորութիւնները այն- պէս՝ ինչպէս մի բազմոցի երես. ամեն բանի ժամանակ է պէտք: Առաջին սի- րոյ ներշնջմունքը մարդու առանձին շնորհքներ է տալիս. բայց պէտք է կա- տարելագործել այդ շնորհքները... Եւ ահա ես հազիւ միջոց ունեցայ իմ չորս կողմը նայելու, երբ արդէն Լաւուրան վա- խեցաւ և հեռացաւ ինձանից: Ինչեք, ինչեք ես չարեցի որ նորից դրաւեմ նրան: Ես ուզում էի մտանալ նրան ամեն կերպով, դժուար էի, խնդրում էի, աղաչում էի... դուք գիտէք, նա աւելի ու աւելի սկսում էր քաշել ինձանից, և դարձանալի չէ, եթէ երբեմն սրտիս տի- րում է այնպիսի սարսափելի տխրու- թիւն, որ համարեա հասնում է լուսա- հատութեան... Այդպիսի բոպէներում ինձ հարկաւոր է օգնութիւն, մի նե- ցուկ և դուք Մատիլդա, ինձ համար շատ բան արեցիք: Մտնում է նրան:

ՄԱՏ.—Վէր է կենում և մի փոքր կե- անք է միայն կոչում Վեռ գուցէ շատ բան

պատանի տարաւ ընթացքում: ԱԿՍԵԼ.—Նորում է: Այո, ինչ քա- շեցի ես այս տարի: Մի այլ այսպիսի տարաւ ես չեմ դիմանալ: Այդ գիրքը ինձ վախեցրեց:

ՄԱՏ.—Այո, Լաւ է եղել:

ԱԿՍԵԼ.—Դուք էլ վեր է կենում: Իսկ այս զլխացաւանքը... իմ ամեն բան այստեղ այնպէս սարքելու ջանքը, ինչ- պէս որ նա սովորած է տեսնել, ճշմա- րիտ ես տղես չեմ դիմանալ... Ամեն բան տանելի կը լինէր, եթէ նա ինձ ցոյց տար գոնէ չնորհակալութեան մի նշան, եթէ պարզեէր ինձ երբեմն գոնէ մի ժպիտ... Յրախն, անձրեկին՝ հս գոր- ծի եմ գնում, ձախորդութիւնների եմ հանդիպում. և ինչ է դուրս գալիս, արդե՞ք դիմաւորում են ինձ մի քաղ- ցըր փաղաքշական խօսքով, գիտէ՞ ար- դեօք նա, թէ ո՞ւմ համար եմ լուսա- ցնում գիշերները աշխատելով. գիտէ՞ արդեօք նա, թէ ինչ է նստել ինձ նը- րան պահելը մի տան մէջ՝ որ ճիշտ ու ճիշտ նման է նրա ծնողների բնակա- րանին: Նա այդ ամենին այնպէս է վե- րաբերում, որ կարծես թէ այդպէս էլ պէտք է լինի, իսկ եթէ մէկը ասէր նրան, թէ ամուսինդ այս ամենը քեզ համար է անում, նա շատ կարելի է կը պատասխանէր. «դուք տեղն է նեղու- թիւն կրում, այս ամենը ես ունէի մեր տանը»:

ՄԱՏ.—Այո, բայց հիմա կարելի է փոփոխութեան սպասել...

ԱԿՍԵԼ.—Ի՞նչ, դուք ասում էք...

ՄԱՏԻԼ.—Հաստատապէս ոչինչ... Բայց ահա նա ինքը:

ԱԿՍԵԼ.—Մի բան պատահած կը լինի, նա այնպէս շտապում է...

3) ՄԱՏԻԼԴ, ԱԿՍԵԼ և ԼԱՌԻՐԱ Բա- ցած համայն ջեւերն

ԼԱՌԻՐ.—Կամայ Մտնում է: Մայրի- կը և հայրիկը տանը այնպէս տխուր են, որ ուզում են արտասահման գնալ, Իտալիա, բայց ասա՛՛... նրանք այստեղ պիտի գան, Մատիլդա:

ՄԱՏ.—Այստեղ. երբ:

ԼԱՌԻՐ.—Իսկոյն... շուտով... ես չը նկատեցի, որ նամակը վերջին կա- յարանից է ուղարկած, նրանք ուզում են անսպասելի կերպով գալ... նրանք իսկայն կը գան: Ի՞նչ անեմ:

ՄԱՏ.—Արեգութեամբ: Ակսելին ասա:

ԼԱՌԻՐ.—Դ՛ու ասա:

ՄԱՏ.—Ո՛չ, դու, պէտք է որ դու...

ԼԱՌԻՐ.—Վախեցած: Մ՛տ:

ՄԱՏ.—Այնչէն: Լաւուրան ուզում է քեզ մի բան ասել:

ԼԱՌԻՐ.—Մատիլդա:

ԱԿՍԵԼ.—Այդ կարծեօք ասա՛ ին անգամն է:

ԼԱՌԻՐ.—Մտնում է: Խնդրեմ, գու- ասա: Մտնում է: Կենտրոն է:

ՄԱՏԻԼ.—Մտնում է: Ի՞նչ կայ:

ԼԱՌԻՐ.—Բաշտեղով, Հալիկու և մալ- րիկու գալիս են:

ԱԿՍԵԼ.—Այստեղ:

ԼԱՌԻՐ.—Այո:

ԱԿՍԵԼ.—Ե՞րբ. անոր:

ԼԱՌԻՐ.—Հիմա, իսկայն...

ԱԿՍԵԼ.—Ուրեմն ինչո՞ւ ոչ ոք ինձ այդ բանը չէր ասել: Վերջում է Գրեմի և ուղում է Գրեմ:

ԼԱՌԻՐ.—Վախեցած: Ակսել:

ԱԿՍԵԼ.—Դժուար թէ նրանք ուղե- նան ինձ տանը գտնել:

ԼԱՌԻՐ.—Մի գնալ:

ՄԱՏ.—Մի գնալ:

ԱԿՍԵԼ.—Բայց միթէ նրանք մեզ մօտ չը պէտք է իջնեն:

ԼԱՌԻՐ.—Ես մտածում էի եթէ թող կը տաս... նրանց քո առանձնասենեակումը տեղաւորել:

ԱԿՍԵԼ.—Այո, ամեն բան իր կարգին կը լինի, ես կը գնամ, իսկ նրանք իմ տեղը կը բռնեն:

ՄԱՏ.—Գուք իմ սենեակը առէք, ես մի վարկեանում ամեն բան կը սարքեմ: Գոհմ է:

4) ԱԿՍԵԼ և ԼԱՌԻՐ

ԱԿՍԵԼ.—Եւ ինչ կարիք կայ այդ ձեռականութիւններին, շատ հասկանալի բան է, որ նրանք քեզ կարօտել են, նոյնպէս հասկանալի է, որ ես խուսափում եմ նրանց պատահելուց: Ես կը ցանկալի միայն, որ դու գոնէ նախապատրաստելիք ինձ, գոնէ խղճալիք վրաս. նրանք, ի հարկէ, քեզ տանելու են զայլիս... և... և եթէ այդպիսի վախճանք քեզ համար ոչինչ նշանակութիւն չունի՝ դու գոնէ պէտք է հասկանալիք, թէ ինչ կը նստի նա ինձ վրա...

ԼԱՌԻՐ.—Ես ինքն էլ նոր միայն լսեցի, որ նրանք գալիս են:

ԱԿՍԵԼ.—Դու կարող էիր սպասել... քո նամակներն են նրանց կանչել. քո գանգատները:

ԼԱՌԻՐ.— Ես գանգատներ չեմ գրել:

ԱԿՍԵԼ.—Ի հարկէ, դու միայն պատմել ես, թէ մենք ինչ տեսակ կեանք ենք վարում:

ԼԱՌԻՐ.—Երբէք: Լաւ է:

ԱԿՍԵԼ.—Զարմացած: Ուրեմն, ինչ էիր գրում նրանց ամեն օր, ամբողջ տարին:

ԼԱՌԻՐ.—Ես գրում էի... թէ մեզ

մօտ ամեն բան կարգին է:

ԱԿՍԵԼ.—Միայն, միշտ... Լաուրա, կարճ եմ հաւատալ: Մի այդպիսի չարգանք... Ա՛խ, ուրեմն դեռ...

ԼԱՌԻՐ.—Բայց ես այդպէս էի անում մայրիկիս և հայրիկիս չարգելու համար:

ԱԿՍԵԼ.—Մտաւ: Ա՛, մայրիկիդ և հայրիկիդ, նրանք ինքները չուտով կը տեսնեն թէ ինչպէս ենք մենք ապրում:

ԼԱՌԻՐ.—Նրանք միայն մի քանի օրուայ համար կը գան, նրանք արտասահման են գնում:

ԱԿՍԵԼ.—Արտասահման, բայց պէտք է որ մէկը ուղեկցէ նրանց, գոնէ դու...

ԼԱՌԻՐ.—Քեզ համար այդ անլարմար կը լինի:

ԱԿՍԵԼ.—Օ՛, այդպէս, դու ուրեմն ինձ դէն ես ձգում: Ես այստեղ կը մնամ միայնակ, Մատիլդայի հետ. իսկ և իսկ այնպէս, ինչպէս այն վէպի մէջ:

ԼԱՌԻՐ.—Մատիլդայի հետ: Մատիլդան կարող է նրանց ուղեկցել:

ԱԿՍԵԼ.—Ներկայ հանգամանքներում մենք առանց Մատիլդայի չենք կարող լինել:

ԼԱՌԻՐ.—Ուրեմն քո կարծիքով աւելի լաւ կը լինի, եթէ ես...

ԱԿՍԵԼ.—Ինձանից ինչ ես հարցնում. ուղեկցաս կը գնաս:

ԼԱՌԻՐ.—Այո, առանց ինձ ապրել կարելի է, բայց ես մտածում եմ այստեղ մնալ:

ԱԿՍԵԼ.—Մնալ, ինձ հետ: Մտաւ... Գոնէ այդ սօյ միայն հայրիկին և մայրիկին չարգելու համար է:

ԼԱՌԻՐ.—Զարմացած: Գոնէ մի կողմ: Օ՛, ո՛չ...

5) ՆՈՅՆՔ և ՄԱՏԻԼԴԱ

ՄԱՏ.—Ամեն բան պատրաստ է: Աչքերն: Գուք ուրեմն մնում էք:

ԱԿՍԵԼ.—Լաուրային նայելու: Չը գի-

տեմ, գոցէ աւելի լաւ կը լինի, եթէ ես գնամ:

ՄԱՏ.—Առաջ գալու: Լաւ, ես էլ կը գնամ:

ԼԱՌԻՐ.—Գոհ:

ԱԿՍԵԼ.—Գոհ:

ՄԱՏ.—Այո, որովհետեւ ես չեմ զիմանալ այն տեսարանին, որ տեղի կուշենայ այն ժամանակ: Լաւ է:

ԱԿՍԵԼ.—Եւ ձեր կարծիքով ինչ կարող է պատահել այստեղ:

ՄԱՏ.—Աւելի լաւ է մի առ ժամանակ լռել: Լաւ է:

ԱԿՍԵԼ.—Արդեօք չատ խիստ չէք դէպի ձեր ընկերուհին:

ԼԱՌԻՐ.—Հարկաւ Մատիլդան իմ ընկերուհին չէ:

ԱԿՍԵԼ.—Մատիլդան քո ընկերուհին չէ:

ԼԱՌԻՐ.—Նայելու: Ընկերուհին չի խարում:

ԱԿՍԵԼ.—Միթէ Մատիլդան մէկին խարել է, դու անտեղի ես խօսում:

ԼԱՌԻՐ.—Նայելու: Մատիլդան է մեղաւոր, որ ես անբաղդ եմ:

ԱԿՍԵԼ.— Լաուրա:

ԼԱՌԻՐ.—Սիրելիս, ինչքան ուղում ես պաշտպանիք նրան, բայց թող տուր ամեն բան ուղղակի ասեմ: Մատիլդան մանկութիւնից ղեկաւարում էր ինձ, և վերջը հասցրեց այնտեղ, որ այսքան տանջանք եմ կրում: Եթէ նա չը լինէր, ես մարդու չէի գնալ և հայրիկից ու մայրիկից չէի հեռանալ, նա ինձ հետ այստեղ եկաւ, բայց ոչ ինձ օգնելու համար. ինչպէս նա ինձ հաւատացնում էր, այլ ծածուկ կերպով, իր սովորութեան համեմատ ինձ լրտեսելու և լետոյ իր ղեկավարով օգտակու... քեզ նա պատրաստ է ծառայելու, որովհետեւ

քեզ... ոչ... չեմ ասի: Այո, Բայց նայեցէք, համեցէք, փորձեցէք թէ երբեք եմ ես դեռ ևս... այն, թող մեր ամեն բանը այնպէս էլ լինի՝ ինչպէս այն վէպի մէջ, որ նա ինձ այնչափ բաւակաւնութեամբ կարգաց... բայց դժուար թէ դուք տեսնէք այն օրը, երբ ես ձեր սէրը աղերսեմ, թող գան մայրիկը և հայրիկը, թող ամեն բան տեսնեն, ամեն բան, ես հիմա այդ եմ ուզում միայն... ես չեմ ուզում որ վրաս ծիծաղեն. չեմ, չեմ ուզում... Մի բռնէ մտած է կանգնած, լուր է եւ փախչում սենեակից:

6) ԱԿՍԵԼ ԵՒ ՄԱՏԻԼԴԱ

ԱԿՍԵԼ.—Ի՞նչ պատահեց նրան:

ՄԱՏ.—Նա ինձ ատում է:

ԱԿՍԵԼ.—Զարմացած: Ի՞նչ, այդ որ ժամանակից:

ՄԱՏ.—Գուք նոր միայն այդ նըկատեցիք:

ԱԿՍԵԼ.—Նայելու: Եւ ձեզ այլ ևս չի հաւատում:

ՄԱՏ.—Այո, ո՛չ աւելի քան մի ուրիշ մարդու:

ԱԿՍԵԼ.—Առաջ նա ամենքից այնպէս հաւատում էր:

ՄԱՏ.—Հիմա ոչոքի չի հաւատում: Լաւ է:

ԱԿՍԵԼ.—Եւ ամենից զարմանալին ինչ է, նա նախանձում է:

ՄԱՏ.—Այո:

ԱԿՍԵԼ.—Չեղ... առանց մի որեւէ պատճառի: Աչքերն կոկի է ասում: Նրա վրա նայելու:

ՄԱՏ.—Մե կողմ է գալու: Գուք պէտք է զրա համար ուրախ լինէք:

ԱԿՍԵԼ.—Ի՞նչ, ինչու, ինչ էք ասում:

ՄԱՏ.— Նախանձը առաջ եկաւ

շատ շարմար ժամանակ, հիմա շուտով նա ձեզ կը սիրէ:

ԱԿՍԷԼ.— Հիմա:

ՄԱՏ.— Սէրը շատ անգամ այդպէս է լալանում:

ԱԿՍԷԼ.— Եւ դուք մի զո՞հ կը լինէք:

ՄԱՏ.— Այդ բանին ես սովոր եմ:

ԱԿՍԷԼ.— Մօթենալով աշխոյժ Երևում է դուք էլ էք սիրել, Մատիլդա:

ՄԱՏ.— Զարմայած չե՞ր է չառնում:

Այո՛, ուղիղ է:

ԱԿՍԷԼ.— Եւ անլաղդ:

ՄԱՏ.— Այո՛, բայց ինչո՞ւ դուք այդ պէս էք կարծում:

ԱԿՍԷԼ.— Ձեզ նմանները այնքան ինքնատէր չեն և չատ, շատ քանի կարող են դիմանալ:

ՄԱՏ.— Այո՛, ով սիրում է նա պատրաստ է իւր սիրելիի երջանկութեան համար ամբողջ անձը զոհելու:

ԱԿՍԷԼ.— Ափսոս որ սէրը երբեմն անբաղդութեան պատճառ է լինում միայն:

ՄԱՏ.— Անսիրտ և անձնատէր մարդկանց համար, այո՛:

ԱԿՍԷԼ.— Քանի աւելի մօտ եմ ծանօթանում ձեզ հետ, այնքան քիչ եմ հասկանում ձեզ. ով է նա, որին սիրել էք՝ առանց նրանից սիրուած լինելու:

ՄԱՏ.— Հիմա ես նրանից շատ շնորհակալ եմ, ես գիտեմ որ ամուսնութիւնը իմ կոչումը չէ:

ԱԿՍԷԼ.— Իսկ ձեր կոչումը...:

ՄԱՏ.— Այո՛, այժմ ես կը լռեմ դրա մասին, մինչև վերջնականապէս չը համոզուեմ որ նա ուղիղ է, բայց ես գիտեմ, որ առանց այն մարդոց, ես դժւար թէ հասկանալի այդ իմ կոչումը:

ԱԿՍԷԼ.— Ուրեմն այդպէս թէ այնպէս, դուք դարձեալ ինձ օգնութեան հասար:

ՄԱՏ.— Այո՛, ես սկիզբը չէի ուղում... երբ դուք դրա մասին խնդրեցիք... բայց մոռացէք այդ. ես արդէն վաղուց գտայ և ուղղեցի իմ սխալը: Այն ժամանակ ես ձեզ չէի ճանաչում և... ուրիշ պատճառներ էլ ունէի...

ԱԿՍԷԼ.— Մօթենալով Մատիլդան, մի անսովոր բան եմ զգում ես զէպի ձեզ. ինձ թուում է, թէ այն ամենը ինչ որ ուրիշները արհամարեցին, դէպի ձեզ է դառնում, ձգտում... և...:

ՄԱՏ.— Լաւա՞ծ չե՞լով: Եկան...

ԱԿՍԷԼ.— Ես ինչ անեմ:

ՄԱՏ.— Գնացէ՛ք դիմաւորելու, շուտով, Լաուրան արդէն այնտեղ է, մի հարկադրէք ուրեմն, որ նա ձեզ պտուէ լաւ եղաւ: Այնչէ՛ք Գնա՞ծ է: Այո՛, լաւ եղաւ, հիմա նրանք անչուշտ կը հաշուեն, ես չաղթեցի: Լաուրա էն Երանիկ և թէ՛. Երանիկ չայնորը, ապա ներս էն Տրուսի Տիլ. Երանիկ Լաուրայի հէտ:

7) ԵԱՆՍԷՆ, ԱԿՍԷԼ և ՄԱՏԻԼԴԱ

Տ. ԵԱՆՍԷՆ.— Ահա դարձեալ մենք միասին ենք, սիրելիս. Համբարում է Լաուրային: ձշմարիտ. բաժան լինելն էլ իր լաւ կողմերն ունի. մենք կարող ենք արպիտով մեզ այս տեսակ բաւականութիւն պատճառել: Նորից համբարում է Լաուրային: Իսկ քո քաղցր նամակները: Ապրես. Նորից համբարում է: Բոլորովին չես փոխել, նոյնն ես մնացել... Մի քիչ միայն դոյնդ է թուել. բայց այդ այդպէս էլ պէտք է լինի: Համբարում է:

ԱԿՍԷԼ.— Երանիկին: որը ես Վրայից քանի շաբաթ է վերցնում: Թոյլ աւէք:

ԵԱՆՍԷՆ.— Շատ շնորհակալ եմ... Ես ինքս: Գնա՞ծ է դէպի նախաշնչու:

ԱԿՍԷԼ.— Թոյլ աւէք տանեմ: Ուրա՞ծ է վերցնել քերք:

ԵԱՆՍԷՆ.— Շնորհակալ եմ ինքս: Գնա՞ծ է:

Տ. ԵԱՆՍԷՆ.— Ձեա հաւատալ, եթէ պատմեմ թէ ինչպէս դժւար էր հայրիկից այստեղ դալու համոզել. նա մինչև հիմա չի կարող մոռանալ: Բայց խօ հարկաւոր էր գնալուց առաջ քեզ տեսնել:

ԼԱՌԻՐ.— Սիրելի մայրիկ: Մոռելու չի հէտ օգնում է Տրուսի զգեստը հանել:

ԱԿՍԷԼ.— Երանիկին, որը վերադառնում է: Կարելի է իմանալ լաւ էք:

ԵԱՆՍԷՆ.— Շատ լաւ:

ԱԿՍԷԼ.— Ձը մրտեցիք:

ԵԱՆՍԷՆ.— Առանձին ծանր բան չը կայ, այնպէս, մի փոքր բուկս ունեց... ուչ էր... շատ էլ ցող էր լիջել. է՛ն, դուք լաւ էք:

ԱԿՍԷԼ.— Շնորհակալ եմ, լաւ:

ԵԱՆՍԷՆ.— Շատ ուրախ եմ:

Տ. ԵԱՆՍԷՆ.— Ահա՛նա՛ն: Տեսնում ես:

ԵԱՆՍԷՆ.— Ի՞նչը, սիրելիս:

Տ. ԵԱՆՍԷՆ.— Միթէ չես նկատում:

ԵԱՆՍԷՆ.— Ո՛չ, ինչ կայ:

Տ. ԵԱՆՍԷՆ.— Այն՝ որ մենք դարձեալ մեր տանն ենք. տես, չէ որ մեր ընդունարանն է:

ԵԱՆՍԷՆ.— Զարմայած: Իրաւ որ:

Տ. ԵԱՆՍԷՆ.— Գորզը, պատերի պատտաւը, կան կարասիքը, բոլորը... և այնպէս է կահաւորած՝ ինչպէս մեր տունը: Մօթենա՞ծ է Ալիկին և Երանիկին: Երանիկին մեծ ապացոյց դէպի մեր աղջիկը ունեցած սիրող չի կարելի պահանջել: Ահա՛նա՛ն: Այնպէս չէ:

ԵԱՆՍԷՆ.—Դէս ևս դարձացած: Իրան, Իրան:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Լաւարային: Իսկ դու մի խօսք էլ չէիր գրել դրա մասին:

ՄԱՍ.—Միայն խօս այս սենեակը չէ, համարեա ամբողջ տունը ձերինի պէս է կահաւորուած:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Ի՞նչ ես ասում:

ԵԱՆՍԷՆ.—Դա ամենագեղեցիկը ընծան է, որ կարող է տալ մարդը կնոջը:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Ինձ շատ զարմացնում է, զաւակս, որ դու դրա մասին ոչինչ չէիր գրել միզ:

ԵԱՆՍԷՆ.—Այո, ոչ մի նամակում:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Միթէ ինքք չէիր նկատում:

ԵԱՆՍԷՆ.—Մարդու աչքը սովորում է նրան ինչ բան որ միշտ աչքի առաջ ունի, նոյնպէս թւում է, թէ դա ամենքին էլ լայտնի է և դրա մասին խօսելն էլ չարժէ, այնպէս չէ:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Եւ այս բոլորը դու պարտական ես Ակսէլի աշխատանքին, դրա համար դու պէտք է որ հպարտ լինես, Լաուրան:

ԵԱՆՍԷՆ.—Շնորհ ինչ որ ասում ես իրանց զպացմունքները նկարագրել, բայց Շնորհ է նորա սա ճշմարիտ որ զարմանալի է:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Միջոցով: Չէ, ասենք վերջին ժամանակայ նամակները մի ամբողջ սիրավէպ են:

ԼԱՌԻՐ.—Մայրիկ:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Դէ, լաւ, լաւ, էլ չեմ ասիլ, ուղիղ, ինչ լաւ ամուսին ունես, Լաուրա:

ԼԱՌԻՐ.—Մայրիկ:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Կոմոյ: Յուսով եմ, որ դու էլ քո կողմից շնորհակալ եղած

կիրենն նրան:

ԵԱՆՍԷՆ.—Մտէնալով նրանց լուս է: Բան ման կարել ես նրա համար, հոք:

ՄԱՍ.—Գին է քերտ: Եւ չնոս է քո ձեռքը:

ԱԿՍԷԼ.—Վերցնում է քո ձեռքը: Հիմա ձեր կենացը, խերսը ձեր սիրած գինին է:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Սղ էլ մտաբերեց:

ԱԿՍԷԼ.—Լաուրան և ես շնորհաւորում ենք ձեր բարի գալուստը, Աստուած տայ որ այստեղ ամեն բան այնպէս տեսնէք... Ը՞նչ է: Ինչպէս ցանկանում էիք: Ես գոնէ իմ կողմից ամեն կանեմ... լուսով եմ որ Լաուրան էլ...

Տ. ԵԱՆՍԷՆ.—Ես նրա տեղը խօսք եմ տալիս: Լաուրային: Ի՞նչ, չիկացրէք բաժակներդ: Այնչը ճորտն է Լաուրային վերջինէ չեւու խոսք դուք է և Գինն լաւ է: Եւ քո ձեռքը: Քիչ ալի է ցրած, զաւակս: Բարեւ շնորհում է քո ձեռքը և իմում էն:

ԵԱՆՍԷՆ.—Նորից Գինն է չնոս: Կինս և ես... շնորհակալ ենք այս բնորոնելութեան համար: Մենք չէինք կարող գնալ առանց տեսնելու մեր աղջկան... մեր որդւոցը... Մի լաւ բարեկամ մեզ խորհուրդ տեց լանկարծակի գալ ձեզ մօտ... Մենք սկզբում չէինք ուզում, բայց հիմա ուրախ ենք, որ Լսեցինք նրան, հիմա մենք տեսնում ենք, որ Լաուրայի գրածները ուղիղ էին... Դուք երջանիկ էք ապրում, ուրեմն և մեր ձերուներներս բանն էլ պէտք է որ լաւ լինի: Ուրեմն մոռանանք այն ամենը, որ վերջի վերջոյ լաւ վախճան ունեցաւ, հը՛, հը՛... կար ժամանակ, երբ այսպէս բան մենք երեւակալել չէինք կարող և այդ պատճառով չէին կարող վճել սղջկանից բաժանելու, բայց հիմա մենք կարող ենք

հանգիստ լինել, հիմա մենք հաւատում ենք... ես հաւատում եմ քեզ, Ակսէլ, Աստուած օրհնէ քեզ: Սեւում է նրա չեւու: Եւ իմում էն:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Գիտէք, հիմա ես ինչ կուզենայի:

ԲՈՒՐԸ.—Ի՞նչ:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Որ Ակսէլը պատմէ թէ ինչպէս դուք հաշտեցիք:

ԼԱՌԻՐ.—Մայրիկ:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Ի՞նչ ես ամաչում, չէ որ դրա մասին մեզ ոչինչ չես գրել. մենք կիմանանք թէ ինչպէս վերջապէս բազմաթիւ դարձան մեր որդիքը: զրանից հետաքրքիր և ցավալի ինչ կարող է լինել ծնողների համար:

ԵԱՆՍԷՆ.—Հիանալի միտք, նըստենք և լսենք: Բարեւ նորում էն, Բոյի Լաուրային, որ ուզում է որ իմում էն, ինչ, մի, այստեղ կաց, մօրդ մօտ նստիր, Ակսէլի պատմելու ժամանակ մենք պէտք է վրադ նայենք: Լաուրային սովորում է նորում էն:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Իսկ դու, Ակսէլ, ոչինչ բաց մի թողնիր և սկզբից մեզ ամեն բան պատմիր, թէ ինչպէս Լաուրան քեզ սիրեց:

ԱԿՍԷԼ.—Լաւ, ես մէկ-մէկ կը պատմեմ եղածը:

ԼԱՌԻՐ.—Անուից վեր լաւ է: Ակսէլ:

ԱԿՍԷԼ.—Ես կլրացնեմ միայն նամակներից միջի պակասը:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Լաուրան, զա քեզ պատիւ է բերում: Ուրեմն հիմա լսիր և ուղղիր: Եթէ նա մի բան սխալ պատմէ, Նորեցնում է:

ԱԿՍԷԼ.—Այո, սիրելիքս, դուք ինքներդ գիտէք, որ սկիզբը լաւ չէինք ապրում...:

ԵԱՆՍԷՆ.—Այո, այո, այդ կարելի է բաց թողնել:

ԱԿՍԷԼ.—Ես շատ շուտ հասկացայ, որ ես մեղաւոր եմ Լաուրայի առջև... նա սխալ էր վախել ինձնից, դողում էր երբ ես մօտենում էի նրան: Առաջ ես ինձ ծանր էի պահում ինչպէս լաղթողը պատերազմից լեռոյ, բայց վախեցայ և զզացի որ իմ նրաւունքը ի չարը չեմ գործ գրել և ահա ես լա-

րեցի բոլոր ողմերս, որ վերջապէս վատակեմ նրա հաւատը և սէրը դէպի ինձ: Դուք տեսնում էք այս տունը. ես աշխատում էի որ ու գիշեր անընդհատ որ նրա համար չինեմ այս տունը, ես աշխատում էի, հաւաքում էի մէկ-մէկ այս բաները որ պահեմ նրան այն սարգ ու կարգի մէջ՝ որին նա սովոր է, որը նա սիրում է... Բայց վերջը նա հասկացաւ և գնահատեց իմ օգտակարութիւնը և զարնանային թոշուները նորից սկսեցին երգել մեր բնիկի մէջ. թէն նա դեռ ևս վախում էր ինձ տեսնելիս, բայց ես դարձեալ զղում էի նրա ներկայութիւնը իմ սենեակում, իմ գրասեղանի մօտ և հարկը ինձ համար թանկ իրերի մէջ...:

ԼԱՌԻՐ.—Ահա ինչ: Ա՛յ, դա այդպէս չէ...

ԵԱՆՍԷՆ.—Մի հաւատաք նրան նա անչափ սիրող սիրտ ունի. նա միայն ամաչում էր. վախում էր. բայց չէր կարող դիմադրել իր սրտի ձայնին և իմ խոնարհ սիրոյն: Երբ ես գիշերները սենեակիս մէջ անքուն աշխատում էի, նա էլ իր սենեակի մէջ անքուն էր անցկացնում, գոնէ ինձ շատ անգամ թւում էր, թէ՛ ես լսում եմ այնտեղ նրա թեթեւ քայլերը... իսկ երբ ես տանջւած, զաղրած տուն էի վերադառնում իմ գործերից... Նա, ուղիղ է, ինձ չէր դիմաւորում, բայց միայն նրա համար, որ չէր ուզում արտայայտել իր զղացմունքները հաշտութեան մեծ. որը հասնելուց առաջ: Լաուրան վեր է կենում:

ԵԱՆՍԷՆ.—Միթէ դուք այդպէս ու չ հաշտեցաք:

ԱԿՍԷԼ.— Այո, ուշ:

Տ. ԵԱՆՍԷՆ.—Եւ Լաուրան այդ թաղցրել էր մեզանից:

ԱԿՍԷԼ.—Նա չէր ուզում զուր տեղը ձեր սիրտը ցուցնել, բայց նոյն իսկ նրա լուսթիւնը լայտնի ասում էր, թէ նա հաւատում է ինձ և սպասում է... զա առաջին ապացոյցն էր նրա սիրոյն... Լաուրան դարձեալ նորում է: Յետոյ մի քանի ուրիշ ապացոյցներ էլ և նա

հասկացաւ որ ես չար չեմ, անգութ չեմ, որ ամեն բանի պատճառը իմ սէրն էր միայն... և նա ինքը ինձ մտեցաւ, հեղ, սիրող... և ահա այսօրայ պէս մի գեղեցիկ օր մենք երկուսս էլ առանձին առանձին կարգում էինք մի վէպ՝ որը կարծես մեր լարաբերութիւնների վրա էր ակրարկում և մեզ մարգարէանում տխուր ապագայ... Սենք վախեցանք և զժկամութեամբ քաշուով էինք միմեանցից... լանկարծ ձեզանից նստակ եկաւ... Սենեակը մէկից լուսաորեց, ճիշտ աչնպէս՝ ինչպէս հիմա ձեր ներկայութիւնից, մեր չորքը գարունը չնջեց, և... ևս տեսայ լաուրայի աչքերի մէջ, որ հասաւ սիրոյ ժամը մեզ համար: Ես չօքեցի նրա սռաջ, ինչպէս հիմա, և ասացի. մեր թանգադին ծնողների համար, ինձ համար, քեզ համար ներքի ինձ և ասուր վերջապէս ինձ քո սիրտը... Այն ժամանակ լաուրան... Լաուրան որտե՞ր էր... Եւ ինչո՞ւ էր... Բարեք վեր էր կենում:

S. ԵԱՆՍԷՆ. — Ա՛խ, զաւակներս, այդ ինչ լաւ է:

ԵԱՆՍԷՆ. — Հիանալի, կարծես նորից վերագործան աչն ժամանակները, երբ մենք ինքներս ջանել էինք և սիրում էինք միմեանց... բայց ինչպէս պատմում է...

S. ԵԱՆՍԷՆ. — Աչնպէս որ, կարծես թէ այդ բոլորը մեր աչքի առաջ կատարեց:

ԵԱՆՍԷՆ. — Ա՛յ քեզ շնորհք:

S. ԵԱՆՍԷՆ. — Կամայ: Նա, շատ առաջ կը գնայ:

ԵԱՆՍԷՆ. — Նայե՛ք, Ծնա, և նա մեր փեսան է:

ԱԿՍԷԼ. — Լաուրայի էն նախքէ՞նք ո՞վ էր 4-րդը: Ուրեմն այդ է քո պատասխանը լաուրան:

ԼԱՌԻՐ. — Դու ամեն բան չպատմեցիր...

S. ԵԱՆՍԷՆ. — Մթթէ, զէ ուրեմն պատմիր:

ԱԿՍԷԼ. — Դէ, սկսիր:

ԼԱՌԻՐ. — Գիտես, ինձ երկար ժամանակ արգելում էր մի մրտք... և

տեսնում էի որ դու ինձ սիրում ես... բայց ես վախեցնում էի թէ դու սիրում ես ինձ միայն... իբրև մի երեխայի:

ԱԿՍԷԼ. — Լաուրան:

ԼԱՌԻՐ. — Ուղիղ է, ես ուրիշների պէս խելացի չեմ... բայց, հաւատաւ ինձ, ես այլևս երեխայ չեմ, որովհետև սիրում եմ քեզ:

ԱԿՍԷԼ. — Եւ զարձեայ դու մանուկ ես:

ԵԱՆՍԷՆ. — Ահա՛նա: Դէ, քնչ եղաւ մեր ճամբորդութիւնը, չէ որ մենք որոշել էինք անմիջապէս առաջ գնալ:

ԱԿՍԷԼ. — Ո՛չ, ո՛չ առաջ մի քիչ մեզ մօտ հիւր եղէ՛ք: Լաուրան նրան նշանէր է անձ: Աչնպէս չէ:

ԼԱՌԻՐ. — Կամայ: Հիմա ես կուզեցայի... որ միայնակ մնանք:

S. ԵԱՆՍԷՆ. — Այդ քնչ ես փոստում, լաուրան:

ԼԱՌԻՐ. — Ե՛ս. ես ասում եմ, թէ ուզում եմ ձեզ խնդրել, որ ձեզ հետ տանէք Մատիլդային...

S. ԵԱՆՍԷՆ. — Ա՛յ, դա գովելի է, որ դու Մատիլդայի մասին հոգ ես տանում, թէև շնորհանրացիս ասում են, թէ երջանիկ նորապսակները ձեռկան են լինում...

ԵԱՆՍԷՆ. — Բացի լաուրայից...

ԼԱՌԻՐ. — Մտիլդային: Մատիլդան, ներքի ինձ, Գրեթախառնում էն ես սխալ հիմա քեզ հասկացալ:

ՄԱՏ. — Դեռ ես ո՛չ բոլորովին:

ԼԱՌԻՐ. — Առանց քեզ ես անշուշտ երբէք այսպէս երջանիկ չէի լրնել:

ՄԱՏ. — Դա ուղիղ է...

ԼԱՌԻՐ. — Ի՛նչպէս ես ուրախ եմ, Մատիլդա:

ՄԱՏ. — Ի բոլոր սրտէ շնորհաւորում եմ քեզ:

ԱԿՍԷԼ. — Բանում է Լաուրայի յետը: Մտիլդային փառաշնորհով: Հիմա և ձեր ճանապարհորդելու ցանկութիւնը կիրաւորուի:

ՄԱՏ. Գրեթա և լաուրա եմ, որ իմ միւս վեպը պատելի լաւագուց կը լինի:

ԱԿՍԷԼ. — Ձեր... և



== Գրենն է 60 կուպ. ==

«Ազգային գրադարան»

NL0167286

